ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

<<ՀՀԿԳՆԲԲԱՀԾՁԲ-16/3-Ա>> ծածկագրով բանակցային ընթացակարգ առանց հայտարարության ավիասպասարկման ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 07.04.2016 թ. ժամը 10:00

Մասնակցում էին՝

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Վ. Բագոյան

Գնումների համակարգող՝ Ա. Մարգարյան

<<Ավիատուր Գրուպ>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Բոբոխյան

<<Տրինիդատ>> ՍՊԸ-ի տնօրեն՝ Ն. Դերբալյան

Հայտերի բացման և գնահատման մասին

1. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

1.1 <<ՀՀԿԳՆԲԲԱՀԾՁԲ-16/3-Ա>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Հասցեները
1	<<Ավիատուր Գրուպ>> ՍՊԸ	ք. Երևան, Թումանյան 2/1
2	«Տրինիդատ» ՍՊԸ	ք. Երևան, Զաքյան 6/36

2. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

2.1 <<Ավիատուր Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

2.2 «Տրինիդատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1 <<Ավիատուր Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես Հավելված 3.1-ը և հավելված 3.4-ը:

3.2 «Տրինիդատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

4.1 <<Ավիատուր Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես մասնակցի հայտով ներկայացված հավելված 1-ը, հավելված 3.2-ը և հավելված 3.3-ը: Հայտով ներկայացվել են հրավերով չսահմանված հավելված 3.5-ը և հավելված 3.6-ը: Ընդ որում ներկայացված հավելված 3.5-ով մասանակիցը հայտնել և հավաստել է, որ չի հանդիսանում ՀՀ ռեզիդենտ կամ ֆիզիկական անձ է, այն դեպքում երբ հանդես է եկել որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, ինչով հերքվում է վերջինիս ֆիզիկական անձ լինելու փաստը: Ինչ վերաբերում է ՀՀ ոչ ռեզիդենտ լինելուն, ապա այդ փաստի իսկությունը տվյալ դեպքում հնարավոր չէ գնահատել, քանի որ հայտով ներկայացված հավելված 1-ում բացակայում է հրավերով պարտադիր սահմանված հայտարարությունը մասնակցի որևէ երկրի ռեզիդենտ լինելու վերաբերյալ: Իսկ հավելված 3.6-ով մասնակիցը պարտավորվել է հրավերով սահմանված կարգով ներկայացնել աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, այն դեպքում երբ հրավերով նման պահանջ սահմանված չի եղել: Միաժամանակ անհրաժեշտ է արձանագրել, որ հայտում բացակայում են մասնակցի կողմից տվյալ հայտարարությամբ ստանձնած պարտավորությունը հիմնավորող փաստաթղթերը, հաշվի առնելով որ ԲԸԱՀ ընթացակարգը, առավել ևս ավիասպասարկման ծառայությունների գնման գործընթացը, կազմակերպվում է մեկ փուլով:

4.2 «Տրինիդատ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին

5. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

5.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չափաբաժին	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները	
		<<Ավիատուր Գրուպ>> ՍՊԸ	«Տրինիդատ» ՍՊԸ
		Առաջարկված գները, ՀՀ դրամ	
1	550000	642000	660000

6. Գնման գործընթացին ներկայացված հայտերի գնահատման արդյունքների մասին

6.1 Հաստատել գնման գործընթացին ներկայացված հայտի գնահատման արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի գնահատման չափանիշը	Մասնակցի անվանումը և գնահատման արդյունքները	
		1 չափաբաժին	
		<<Ավիատուր Գրուպ>> ՍՊԸ	«Տրինիդատ» ՍՊԸ
1	Կազմված և ներկայացված հայտի համապատասխանությունը հրավերի պահանջներին	համապատասխանում է	համապատասխանում է
2	Հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը	չի համապատասխանում	համապատասխանում է

3	Հայտով ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին	չի համապատասխանում	համապատասխանում է
	Ընդհանուր գնահատականը	**անբավարար**	**բավարար**

6.2 Հիմք ընդունելով 6.1 կետով արձանագրված գնահատման արդյունքները՝ մերժել <<Ավիատուր Գրուպ>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

7. Միաժամանակյա բանակցությունների կազմակերպման մասին

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի գ/ պարբերությունը հրավերին համապատասխանող հայտ ներկայացրած մասնակցի՝ «Տրինիդատ» ՍՊԸ-ի հետ առաջարկված գնի նվազեցման նպատակով, կազմակերպել միաժամանակյա բանակցություններ:

7.2 Մասնակցի առաջարկված գնի նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցությունների վարման համար սահմանել ժամանակահատված 10 րոպե տևողությամբ:

7.3 ԲԸԱՀ գնման գործընթացի մասնակցի առաջարկված գնի նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցությունների վարման համար սահմանված 10 րոպե ժամանակահատվածի ընթացքում մասնակցի կողմից եղել է հետևյալ առաջարկը /հիմք՝ հավելված 1/.

Չափաբաժին	**Ծառայության անվանումը**	**Մասնակցի անվանումը**	**Նախահաշվային գինը, ՀՀ դրամ**
		Մասնակցի բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին ներկայացված վերջնական գինը, ՀՀ դրամ	
		«Տրինիդատ» ՍՊԸ	
1	Ավիասպասարկման ծառայություն	**640000**	**550000**

7.4 Հիմք ընդունելով 7.3 կետը և հաշվի առնելով, որ մասնակցի ներկայացրած գինը դեռևս գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը՝ մերժել <<Տրինիդատ>> ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

8. Գնման գործընթացի արդյունքների մասին.

Համաձայն ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի <<ՀՀԿԳՆԲԱՀԾՁԲ-16/3-Ա>> ծածկագրով գնման գործընթացը հայտարարել չկայացած՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին հիմքով:

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ ----------Վ. Բագոյան

Գնումների համակարգող՝ ---------- Ա. Մարգարյան

Հավելված 1
07.04.2016թ «ՀՀԿԳՆԲՄԱՀՇՁԲ-16/3-Ա» ծածկագրով ԲՄԱՀ գնման գործընթացի նիստի արձանագրության

Բանակցությունների արդյունքում առաջարկված գները

Չափաբաժին	Ապրանքի անվանումը	<<Տրինիդատ>> ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ	
		Հայտով առաջարկված գինը, ՀՀ դրամ	Մասնակցի բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին ներկայացված վերջնական գինը, ՀՀ դրամ
1	*Ավիասպասարկման ծառայություններ*	*660000*	*640000*

<<Տրինիդատ>> ՍՊԸ տնօրեն՝ **Ն. Դերբայան**

07.04.2016թ